ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____ « ____ »_____ **2023 թ.** **ք.Երևան**

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 84-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի N 30-Լ հրամանի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2018 թվականի օգոստոսի 21-ի «Ներքին աուդիտի կոմիտե ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2012 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 103-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 84-Ա հրամանը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

21 օգոստոսի 2018 թվականի № 84 - Ա

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանով հաստատված հավելվածի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Պետական գույքի կառավարման կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) ներքին աուդիտի համակարգին աջակցելու և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված լիազորություններն իրականացնելու նպատակով ստեղծել ներքին աուդիտի կոմիտե հետևյալ կազմով.

Ա. Ավետիսյան	Կոմիտեի նախագահ, ներքին աուդիտի կոմիտեի նախագահ,
Գ. Բաբայան	Կոմիտեի նախագահի տեղակալ, ներքին աուդիտի կոմիտեի անդամ,
Գ.Հովսեփյան	Կոմիտեի նախագահի տեղակալ, ներքին աուդիտի կոմիտեի անդամ,
Դ. Մկրտումյան	Կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ, ներքին աուդիտի կոմիտեի անդամ,
Մ. Ղուշչյան	Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության պետ, ներքին աուդիտի կոմիտեի անդամ,
Ա. Մելիք-Իսրայելյան	Պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ, ներքին աուդիտի կոմիտեի անդամ,
Գ. Հովհաննիսյան	Իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժնի պետ, ներքին աուդիտի կոմիտեի անդամ,
Ա. Թառլամազյան	Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության փորձագետ, ներքին աուդիտի կոմիտեի անդամ,
Հ. Մանուկյան	Պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի գլխավոր մասնագետ, ներքին աուդիտի կոմիտեի անդամ:»:

12.04.2023

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ Signed by: AVETISYAN ARNAK 1701920336

Ուղարկել՝ Կոմիտեի նախագահին, Կոմիտեի նախագահի տեղակալներին, գլխավոր քարտուղարին, գլխավոր քարտուղարի տեղակալին և ներքին աուդիտի կոմիտեի անդամներին